# ԹԵՄԱ 4 ԱՖՐԻԿԱ

## ԴԱՍ 4.1. Աշխարհագրական դիրքը և սահմանները: Երկրաբանությունը, օգտակար հանածոները

• • •

*Ջրանցքը սկսվում է Միջերկրականի ափին գտնվող պորտ Սաիդ նավահանգստից և ավարտվում է Կարմիր ծովի մաս կազմող Սուեզի ծովածոցի ափին գտնվող համանուն նավահանգստում՝ կրճատելով Ատլանտյան և Հնդկական օվկիանոսների հյուսիսային նավահանգիստների միջև ճանապարհը 8– 15 հազար կիլոմետրով:*

*...Ջրանցքի կառուցումը սկսվել է 1859թ. և ավարտվել 1869թ–ին՝ Ֆրանսիացի դիվանագետ և ձեռնարկատեր Ֆերդինանդ Լեսեփսի ջանքերով և նախագծով: 1882թ. «անվտանգության և կայունության ապահովման » պատրվակով Մեծ Բրիտանիան զորք մտցրեց Եգիպտոս՝ բացառիկ վերահսկողություն սահմանելով ջրանցքի նկատմամբ: 1922թ. Եգիպտոսը ազգային ազատագրական պայքարի արդյունքում անկախություն ստացավ, բայց ջրանցքը կարողացավ ազգայնացնել միայն 1954 թվականին:*

*Նշենք, որ Եգիպտոսի պատվերով Ջուզեպե Վերդին գրեց «Աիդա» օպերան, որն առաջին անգամ ներկայացվեց ջրանցքի բացման առիթով՝ 1869 թվականին:*